



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

12.02.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-ԼՕ-2021/09

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն
Մասնակից՝ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Փոթոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,
դեղերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ
քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/279-2021 գրությամբ «Էմ Դի Էյ Թրեյդ»
ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության 11.01.2020թ. թիվ ԱԹ/06.3/55-2021 գրության հիման վրա, 14.01.2021թ.-ին «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 14.01.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 14.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/09 համարի ծածկագիրը:

21.01.2021թ.-ին, 03.02.2021թ.-ին և 12.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.02.2021թ.-ին:

2. ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ առողջապահության նախարարությունը 11.01.2020թ.-ին թիվ ԱԹ/06.3/55-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հայրնում եմ, որ Առողջապահության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «ԷՄ Դի ԷՅ ԹԹԵՅԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2020 թվականի հոկտեմբերի 27-ին կնքվել է թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2» պայմանագիրը, որի համաձայն Վաճառողը պարտավոր էր մինչև 2020 թվականի նոյեմբերի 16-ը մատակարարել 50 հար

«Բերակտանյ» անվանմամբ դեղը, ընդհանուր 8,572,000 (ութ միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

2020 թվականի դեկտեմբերի 24-ի դրությամբ Վաճառողը չի մատակարարել վերոգրյալ պայմանագրով նախատեսված ապրանքը: Ղեկավարվելով պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի բ) ենթակետով Գնորդը միակողմանիորեն լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր միջնորդությունը՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված միջոցառումները իրականացնելու հարցում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնումների համակարգող Հասմիկ Մնացականյանի կողմից ստորագրված, բայց առանց լիազորագրի Բողոքներ քննող անձի էլ. հասցեին է ուղարկել գրություն, համաձայն որի՝

««Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից ներկայացված դիրքորոշումը Առողջապահության նախարարության կողմից չի ընդունվում:

Կազմակերպությունը նշում է, որ դեղը ըստ կնքված պայմանագրի հնարավոր չի եղել մատակարարել ներմուծում չիրականացնելու պատճառով: Առողջապահության նախարարության կողմից ներմուծումը մերժվել է, քանի որ Առողջապահության նախարարության ենթակայության «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է բացասական եզրակացություն՝ չգրանցված դեղի համար՝ ՀՀ կառավարության 02.05.13թ. թիվ 502-Ն որոշման պահանջներից ելնելով: Առողջապահության նախարարության և Կազմակերպության կողմից կնքված պայմանագրում հստակ նշված են պարտադիր պահանջները՝ չգրանցված դեղ մատակարարելու դեպքում: Պահանջներից է վերոնշյալ եզրակացությունը (կցվում է): «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն հանդիսանալով ՀՀ-ում դեղերի գրանցման պետական կառույց ներկայացրել է մասնագիտական, փորձագիտական եզրակացություն, որը պարտադիր և անքննելի է Առողջապահության նախարարության համար: Հետևաբար, Կազմակերպության կողմից ևս նշված օրինակները Առողջապահության նախարարության կողմից չեն ընդունվում:

Միաժամանակ, հայտնում եմ, որ Կազմակերպության կողմից մատակարարվող դեղը օգտագործվում է անհաս նորածին երեխաների բուժման ընթացքում: Հետևաբար, թե պայմանագրի չկատարումը՝ դեղի չմատակարարումը, հանգեցրել է դեղապահովման ընդհատմանը, որը բոլոր պայաններում՝ և իրավական, և բարոյական առումով անընդունելի է:

Բացի այդ, կարծում եմ, որ այս գործի շրջանակում չի քննվում մասնագիտական եզրակացության բովանդակությունը և արժանահավաստությունը, այլ զուտ գնումներին առնչվող հարցերը:»:

3. «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 14.01.2021թ.-ի գրությամբ դիմել է «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/279-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարած թիվ ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և 2020թ.-ի հոկտեմբերի 27-ին պայմանագիր է կնքել մեկ չափաբաժնի մասով՝ չափաբաժին 2 Սուրվանյա (Բերակտանյա) - 50 սրվակ քանակությամբ:

«Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն Սուրվանյա դեղը ՀՀ առողջապահության նախարարություն մատակարարելու նպատակով պետք է ձեռք բերեր «Ջեյրա» ՍՊԸ-ից համաձայն վերջինիս հետ 14.09.2020թ-ին կնքված պայմանագրի (կից ներկայացնում ենք):

Հարկ ենք համարում նշել, որ «Ջեյրա» ՍՊԸ-ն և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն հանդիսանում են փոխկապակցված կազմակերպություններ՝ կազմակերպությունների հիմնադիրը և տնօրենը հանդիսանում են նույն անձիք:

Համաձայն 10143 առ 02.11.2020թ-ի հաշիվ ապրանքագրի «Ջեյրա» ՍՊԸ-ն թիվ 157-25449620 օդային բեռնագրով (համապատասխան փաստաթղթերը կցվում են) ՀՀ է

ներկրում Սուրվանդա (Բերակրանդ) - 50 սրվակ քանակությամբ և ներկայացնում ՀՀ առողջապահության նախարարություն դեղի ներմուծման թույլտվություն ստանալու համար:

ՀՀ ԱՆ առընթեր Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն ՓԲԸ-ն /այսուհետ փորձագիտական կենտրոն/ տալիս է մի անհասկանալի եզրակացություն համաձայն որի գտնում է, որ դեղը գրանցված չէ ՀՀ-ում որոշակի տեղեկատվության բացակայության պատճառով /կից ներկայացնում ենք/: Մինչդեռ փաստաթղթերում, ներդիր թերթիկում, տուփի արտաքին փաթեթավորման վրա հստակ նշված է , որ դեղը արտադրել է այն նույն արտադրողը, որի նույն դեղը գրանցված է ՀՀ-ում, ավելի, արտադրել է այն նույն հասցեում գրանցված, նույն արտադրական տարածքում, որը և գրանցված է ՀՀ-ում, արտադրում է նույն առևտրային անվանումով, որը գրանցված է ՀՀ-ում :

Իսկ նույն արտադրողը նույն դեղը, նույն առևտրային անունով, նույն ազդող նյութով, նույն դոզավերմամբ և նույն պահպանման պայմաններով /2-8 C/ չի կարող արտադրել տարբեր օժանդակ նյութերի կազմով:

Նաև փորձագիտական կենտրոնը նշել է, որ տուփի վրա նաև պետք է նշված լինի ՉՍԱՌԵՅՆԵԼ բառը: Եթե պահպանման պայմանը թե գրանցման փաստաթղթերով և թե ներկրվող դեղի վրա նշված է 2-8C, պարզ է, որ այդ ջերմաստիճանից շեղումը կբերի դեղի որակական փոփոխության:

Հիմնվելով փորձագիտական կենտրոն ՓԲԸ-ի եզրակացության վրա, ՀՀ առողջապահության նախարարությունը մերժում է դեղի ներմուծումը ՀՀ /կից ՀՀ ԱՆ նախարարի հրամանը դեղի ներկրումը մերժելու վերաբերյալ/:

«Ջեպրա» ՍՊԸ-ն գրություններով դիմում է փորձագիտական կենտրոն ՓԲԸ, պահանջելով ներկայացնել պարզաբանում նման խայտառակ եզրակացություն տալու համար, սակայն ամեն անգամ ստանում է խուսափողական պատասխաններ:

Որպես օրինակ բերենք մի փաստ, որը հստակորեն կներկայացնի իրավիճակը. համաձայն ՀՀ-ում գրանցված դեղի փաստաթղթերի, դեղը միաժամանակ հեղուկ միջավայրում պետք է պարունակի թթու և հիմք, այն դեպքում, երբ նույնիսկ դպրոցական դասագրքերով աշակերտներին բացատրում են, որ հիմքը և թթուն միաժամանակ չենք կարող հանդես գալ, քանի որ տեղի է ունենում ռեակցիա և անջատվում է աղ և ջուր: Փորձագիտական կենտրոնի մասնագետները նույնպես ընդունում են այս փաստը, սակայն իրենց խոսքով այլ բան չեն կարող ներկայացնել, քանի որ իրենց համար հիմքը գրանցման փաստաթղթերն են, թեկուզ և սխալ:

Իսկ նման կերպ արտադրող կազմակերպությունը գրանցել է դեղը հեպատալիտի միայն մեկ նպատակ, արգելք հանդիսանալ դեղի զուգահեռ ներկրմանը այլ երկրների շուկաներից, որտեղ նույն դեղը վաճառվում է շատ ավելի էժան:

Մինչ այժմ դեղի մաքսազերծման հարցը դեռ լուծված չէ, և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն իրենից անկախ պատճառով չի կարողացել մատակարարել դեղը ՀՀ առողջապահության նախարարություն: Տվյալ հանգամանքը ստեղծվել է ոչ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի մեղքով և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն չի կարողացել նախապես կանխատեսել իրադրությունների նման զարգացումը կամ ազդել դրանց ընթացքի վրա:»:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ներկայացված դիրքորոշման լրացմամբ Մասնակիցը հավելել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ ՀՀ առողջապահության նախարարության դիրքորոշման հետ համաձայն չենք, քանի որ մեր կողմից ՀՀ է ներկրվել ոչ թե չգրանցված դեղ, այլ ՀՀ-ում գրանցված դեղ արտադրված նույն արտադրողի կողմից, նույն արտադրական փաթեթում, նույն արտադրական հոսքագծում, նույն առևտրային անունով, նույն դոզայով և նույն դեղաձևով:

Մեր կողմից ներկրվող դեղի փաթեթավորման վրա, համաձայն նույն եզրակացության, որը մեր կողմից արդեն իսկ ներկայացվել էր, նշված չէ օժանդակ նյութերի գրառումը: Եվ այդ նույն եզրակացությունից պարզ է դառնում, որ ՀՀ առողջապահության նախարարությունը խոսում է այլ թեմայից:

Չնայած և չի քննարկվում փորձագիտական եզրակացությունը, սակայն ՀՀ ԱՆ-ն հիմք է ընդունել այդ գրությունը՝ չթույլատրելով դեղի ներմուծումը ՀՀ:

Իսկ խնդիրը այն է, որ ՀՀ-ում գրանցված դեղը, գրանցվել է թերություններով և չի համապատասխանում արտադրող երկրի՝ ԱՄՆ-ի ոլորտը կարգավորող մարմնի US FDA-ի պահանջներին:

Ինչ վերաբերում է բարոյականությանը, ապա այստեղ իրոք համաձայն ենք առողջապահության նախարարության կարծիքի հետ, քանի որ հաշվի առնելով փվյալ դեղի օգտագործման ոլորտը և նպատակը, արդեն իսկ կնքված պայմանագիրը, դեղի առկայությունը ՀՀ մաքսային պահեստում, ներմուծվող դեղի գրանցված լինելու փաստը,

ապա ներմուծման թույլտվություն չտալը բոլոր պայմաններում բարոյական առումով անընդունելի է: Նույնիսկ չենք էլ խոսում ֆինանսական կորուստների մասին:

Նաև կից ներկայացնում ենք վերջին նամակագրությունները Ակադեմիկոս է. Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի ՓԲԸ-ի հետ, որտեղից պարզ է դառնում, որ կենտրոնը ոչ ուղղակի կերպով ընդունում է իր կողմից տրված սխալ եզրակացությունը:»:

4. US-LO-2021/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 27.10.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետի սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրը՝ մինչև 16.11.2020թ.-ը:

iii. Նույն հավելված 1-ով սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքի անվանումը՝ «Բերակտանտ», ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը նշվել է՝ «Սուրվանտա, Էբբվիե Ինկ», իսկ որպես տեխնիկական բնութագիր՝ «Բերակտանտ դեղակախույթ ներշնչափողային 25մգ/մլ, սրվակ»:

iv. ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2020թ.-ին թիվ 4533-Ա հրամանի համաձայն՝ «Ջետտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հնդկաստանից թիվ 10143 առ 02/11/2020թ. հաշիվ-ապրանքագրով «Սուրվանտա դեղակախույթ ներշնչափողային 25մգ/մլ; ապակե սրվակ 4մլ» դեղի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն մերժվել է՝ հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, 21-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի փետրվարի 28 ի թիվ 202-Ն որոշման թիվ 1 հավելվածի 5-րդ կետը, առողջապահության նախարարի 21.01.2020թ. թիվ 02-Ն հրամանը, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 728-Լ

որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի թիվ 22723-20 փորձագիտական եզրակացությունը, որի համաձայն ներմուծվող «Սուրվանտա դեղակախույթ Ներշնչափողային 25մգ/մլ; ապակե սրվակ 4մլ» դեղը գրանցված չէ ՀՀ-ում բաղադրության վերաբերյալ տեղեկատվության բացակայության հիմքով:

v. 03.02.2021թ.-ին Մասնակցի և «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ «Ջետտա» ՍՊԸ-ն և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն հանդիսանում են փոխկապակցված կազմակերպություններ, մասնավորապես՝ «Ջետտա» ՍՊԸ-ի և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի հիմնադիրը հանդիսանում է Արման Վլադիմիրի Դաշյանը, տնօրենը հանդիսանում է Էդուարդ Վաչագանի Փոթոյանը, ընկերությունների գրանցման վայրը նույնն է՝ Աբովյան փ. 23, Կենտրոն, Երևան, Հայաստան: Որպես հավաստում կից ներկայացրել են «Ջետտա» ՍՊԸ-ի և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքները:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.12.2020թ.-ի թիվ ԼԲ/06.3/28546-2020 ծանուցման համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 27.10.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2» պայմանագրի համաձայն՝ Մասնակիցը պարտավոր էր ՀՀ առողջապահության նախարարությանը մինչև 16.11.2020թ. մատակարարել 50 հատ «Բերակտանտ» անվանմամբ դեղը, ընդհանուր 8 572 000 (ութ միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Հաշվի առնելով վերոգրյալ նախատեսված քանակի ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 23.12.2020թ.-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը (խախտվել է մատակարարման ժամկետը):

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/279-2021 գրությամբ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, գնորդն իրավունք ունի՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով

առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում (*տե՛ս*, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից դեղերի ձեռքբերման նպատակով 09.09.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 7.20-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 7.20) սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

«Վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ

հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը (տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 27.10.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով ապրանքների մատակարարման ժամկետի սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրը՝ մինչև 16.11.2020թ.-ը և նույն հավելված 1-ով սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքի անվանումը՝ «Բերակտանտ», ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը նշվել է՝ «Սուրվանտա, Էբբվիե Ինկ», իսկ որպես տեխնիկական բնութագիր՝ «Բերակտանտ դեղակախույթ ներշնչափողային 25մգ/մլ, սրվակ»:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի

միակողմանի լուծման մասին 23.12.2020թ.-ի թիվ ԼՔ/06.3/28546-2020 ծանուցման համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 27.10.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2» պայմանագրի համաձայն՝ Մասնակիցը պարտավոր էր ՀՀ առողջապահության նախարարությանը մինչև 16.11.2020թ. մատակարարել 50 հատ «Բերակտանտ» անվանմամբ դեղը, ընդհանուր 8 572 000 (ութ միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Հաշվի առնելով վերոգրյալ նախատեսված քանակի ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 23.12.2020թ.-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը (խախտվել է մատակարարման ժամկետը):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ, տվյալ դեպքում, «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները չեն կատարվել: Մասնակիցը սահմանված ժամկետում չի մատակարարել Պայմանագրով նախատեսված քանակի ապրանքներ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ 03.02.2021թ.-ին Մասնակցի ու «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանքով հիմնավորվում և հաստատվում է, որ «Ջետտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հնդկաստանից թիվ 10143 առ 02/11/2020թ. հաշիվ-ապրանքագրով «Սուրվանտա դեղակախույթ ներշնչափողային 25մգ/մլ; ապակե սրվակ 4մլ» դեղը Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել վերջինիս հետ փոխկապակցված կազմակերպության՝ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման համար, որը ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2020թ.-ի թիվ 4533-Ա հրամանով մերժվել է՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 22723-20 փորձագիտական եզրակացությունը, առ այն, որ «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ներմուծված «Սուրվանտա դեղակախույթ Ներշնչափողային 25մգ/մլ; ապակե սրվակ 4մլ» դեղը գրանցված չէ ՀՀ-ում՝ բաղադրության վերաբերյալ տեղեկատվության բացակայության հիմքով:

Ընդ որում, հարկ է փաստել նաև, որ Պատվիրատուն (գնահատող հանձնաժողովը) մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման ընթացքում՝ մինչև պայմանագրի կնքումը, կարող էր կիրառել Կարգի 67-րդ կետի (Հրավերի 7.20) դրույթով նախատեսված իր հայեցողական լիազորությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը, որը չի կատարել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (ՀՀ

առողջապահության նախարարի 22.12.2020թ.-ին թիվ 4533-Ա հրամանով «Ջետտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հնդկաստանից թիվ 10143 առ 02/11/2020թ. հաշիվ-ապրանքագրով «Սուրվանտա դեղակախույթ ներշնչափողային 25մգ/մլ; ապակե սրվակ 4մլ» դեղի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն մերժվելով), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ. թիվ 26/26-1/279-2021 գրությամբ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/09 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝**



ԼԵՎՈՆ ՕՇԱՆՅԱՆ